

Ք. \_\_\_\_\_

"\_\_" \_\_\_\_\_ 20 Ք.

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս \_\_\_\_\_

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և \_\_\_\_\_

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է \_\_\_\_\_

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ցպահանջ ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին առաջին իսկ պահանջով վերադարձնել Ցպահանջ ավանդի գումարը՝ ավելացված ավանդի գումարով, և Պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանցից:

1.2. Ավանդի գումարը և արժույթը \_\_\_\_\_  
(գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույթը՝ \_\_\_\_\_ տարեկան:  
(տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.4. Ավանդատուից առնվազն 10 օր անընդմեջ 5 մլն ՀՀ դրամից և դրան համարժեք արտարժույթից ավել ներգրավված Ցպահանջ ավանդի դիմաց վճարվում է տարեկան 1 (մեկ) տոկոս, մնացած դեպքերում վճարվում է սույն պայմանագրի 1.3 կետում նշված տոկոսադրույթը:

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ \_\_\_\_\_ ավանդային հաշիվը:

1.6. Ավանդի տոկոսները վճարվում են յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Բանկը պարտավորվում է վերադարձնել Ավանդատուին Ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

2.2. Բանկի կողմից Ցպահանջ ավանդի համար վճարվող տոկոսների չափը նվազեցնելու դեպքում տոկոսների նոր չափը կիրառվում է Բանկի կողմից սահմանված օրվանից: Տոկոսների նոր չափի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հանրապետական մամուլում:

2.3. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.4. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքը այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.5. Ավանդի կանխիկ մուտքագրումը և ավելացումը հավաստվում է բանկային փաստաթղթով (ստորագրված և կնքված դրամարկի մուտքի անդորրագիր կամ ստորագրված և դրոշմակնքված մեմորեալ օրդեր), առանց որի սույն պայմանագիրը առաջին իսկ: Բանկը պարտավոր է, օրենքով սահմանված կարգով, առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել հաշվի քաղվածք՝ եթե հաշվետու ժամանակահատվածում տվյալ հաշիվը դեբետագրվել (և) կամ կրեդիտագրվել է:

2.6. Ավանդն անկանխիկ ներդնելու կամ ավելացնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), Ավանդի մուտքագրումը հավաստվում է Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը:

2.7. Սույն պայմանագրի 2.5. և 2.6. կետերով նախատեսված քաղվածքները՝ Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա, տրամադրվում են

- առձեռն
- փոստի միջոցով \_\_\_\_\_ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով \_\_\_\_\_ /e-mail/

2.7.1. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.7. կետով սահմանված պայմաններով:

2.8. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.9. Բանկային ավանդի գումարի վրա տոկոսներն հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելուն հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.10. Այն դեպքում, երբ Ավանդատուն չի պահանջում հաշվարկված տոկոսները, դրանք ավելանում են Ավանդի գումարին, որի նկատմամբ կատարվում է հետագա տոկոսների հավելագրումը:

2.11. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

2.12. Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.13. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս, համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, պահում է (գանձում) է եկամտահարկի գումարը և այն փոխանցում է պետական բյուջե:

2.14. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.15. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.16. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները:

**ԲԱՆԿ**

Հասցե \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

\_\_\_\_\_

/ստորագրություն/

**ԱՎԱՆԴԱՏՈՒ**

Հասցե \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Անձնագրի տվյալները \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

\_\_\_\_\_

/ստորագրություն/